

Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«23» Տախիբ 2014 թ. թիվ 62 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԱԻ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ
ՈՒՍՈՒՅՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
(նոր խմբագրությամբ)

Երևան 2014 թ.

1. Սույն կանոնակարգով սահմանվում է մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԱԱ ԳԿՄԿ) մագիստրատուրայի ընդունելության պայմանները:
2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները 06.12.2007թ. ՀՀ Կրթության և Գիտության նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը, ԳԱԱ ԳԿՄԿ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:
3. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:
4. ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրա կարող է ընդունվել ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը:
5. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի նախագահությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ փոխտնօրենի, ուսումնամեթոդական մասի պետի, դեկանի, գիտքարտուղարի, ուսումնական մասի առաջատար մասնագետի և ուսումնական մասի այլ աշխատակիցների կազմով: Քննությունների անցկացման համար ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում են տվյալ ամբիոնի վարիչը, և դասախոսները:
6. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 3 փուլով.
 - 7.1. **Առաջին փուլում** անվճար համակարգ կարող են դիմել այն շրջանավարտները, ընդունելության մրցույթին ապահովվել են առավել բարձր արդյունք: Առաջին փուլի մրցույթը անցկացվում է քննություն կամ հարցազրույցի տեսքով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:
Դիմորդների մրցույթի արդյունքները հավասար լինելու դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.
 1. ՄՈԳ-ի մեծությունը,
 2. ավարտական աշխատանքի պաշտպանության և ամփոփիչ առեստավորման քննության միավորների գումարը:
 - 7.2 **Երկրորդ փուլում** վճարովի համակարգ կարող են դիմել (նաև 7.1. կետի պահանջները չբավարարելու դեպքում) պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի ընթացիկ և նախորդ տարիների շրջանավարտները: Ընդունելությունը

